ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Տեղեկանք հիմնավորում

Նոյեմբերյան համայնքի Դովեղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-027-0015-0002 ծածկագրում առկա 0,34 հա մակերեսով հողամասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 09.03.2006 թվականի թիվ 340-Ն որոշման համաձայն հանդիսանում է պետական սեփականություն, մինչդեռ նշյալ հողամասում առկա շինությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 14.09.1997 թվականի թիվ 51 որոշման համաձայն հանդիսանում է համայնքային սեփականություն՝ որպես նախադպրոցական հիմնարկ: 1994 թվականից նախադպրոցական հիմնարկը ինքնակամ բնակեցվել է կացարանի սուղ կարիք ունեցող ընտանիքների կողմից, ովքեր հայտնվելով ծանր սոցիալական պայմաններում հնարավորություն չեն ունեցել գնել կամ կառուցել նոր տներ և ստիպված են եղել սահմանամերձ գյուղի կրակոցներից ավերված իրենց տներից վերաբնակվել հիշյալ նախադպրոցական հիմնարկի շենքում:

Հարկ է նշել, որ տասնյակ տարիների ընթացքում այս ընտանիքներում սերնդափոխություն է կատարվել, դրանք ճյուղավորվել են և բազմացել: Այսօրվա դրությամբ նախադպրոցական հիմնարկի շենքում բնակվում է 6 ընտանիք, ընդհանուր առմամբ՝ մոտ 30 մարդ: Բնակտարածքը և կենսապայմանները առավել քան անբավարար են և սա արդեն մեծ խնդիր է համայնքի համար: 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է համայնքի երեխաների անվտանգությունը ապահովելու նպատակով Դովեղում նոր դպրոց կառուցել: Նախատեսվող դպրոցի տարածքի մի մասը կից է նախադպրոցական կենտրոնի տարածքին, իսկ մյուս մասը մոտ 0,11 հա-ի չափով ընկնում է նախադպրոցական հիմնարկի սպասարկման և պահպանման տարածք հանդիսացող 0,34 հա մակերեսով հողամասի մեջ: Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է հիմնել 5 տարբեր հողամասերում, որոնցից 2-ը համայնքային նշանակության են, 2 հողամասեր սեփական են, ընդ որում պատկանում են նախադպրոցական

հիմնարկում բնակվող 2 ընտանիքի, և 5-րդ հողամասը, որը նախադպրոցական հիմնարկի տարածքի մի մասն է կազմում, պետական սեփականություն է: Նոյեմբերյանի համայնքապետարանը արդեն համաձայնություն է ձեռք բերել նշված 2 սեփականատեր հողօգտագործողների հետ, որպեսզի գնի նրանց պատկանող հողերը և համայնքային սեփականություն հանդիսացող 2 հողամասերի՝ հետ միասին նվիրաբերի Հայաստանի Հանրապետությանը՝ դպրոց կառուցելու համար: Փաստորեն Դովեղում նոր դպրոցի կառուցման համար անհրաժեշտ է 5 հողամաս, որից 4-ը կտրամադրի Նոյեմբերյանի համայնքապետարանը, իսկ մեկը Հայաստանի Հանրապետությունը: Ուստի հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները, ինչպես նաև նախադպրոցական հիմնարկի շենքում բնակվող բնակիչների կողմից իրենց սեփական հողամասերը դպրոց կառուցելու համար տրամադրելու պատրաստակամությունը, խորապես գիտակցելով սահմանամերձ բնակավայրում բնակչության ծանր ապրելակերպը, և դրանից բխող նոր բնակարաններ կառուցելու կամ ձեռք բերելու անհնարինությունը, խնդրում ենք ընդունել Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված կառավարության որոշման փոփոխության նախագիծը՝ հնարավորություն տալով նախադպրոցական հիմնարկի շենքը՝ իր առանձին մասնաբաժիններով, օրենքով սահմանված կարգով հատկացնել նույն շենքում փաստացի բնակվող ընտանիքներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ